# ԲԱԶՄԱՎԷՊ ՀԱՆԴԻՍԱՐԱՆ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ - ԳԻՏԱԿԱՆ - ԲԱՐՈՅԱԿԱՆ

ՌՅՀԷ - ՌՅՀԸ

ՀԱՏՈՐ ՁԵ

1928

ՆՈՅԵՄԲԵՐ ԴԵԿՏԵՄԲԵՐ

Թիւ 11-12

Ս. ՂԱԶԱՐ


ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

## ԵԶՆԻԿԻ ԵՂԾ ԱՂԱՆԴՈՑԻ

### ԲՆԱԳՐԻ ԵՒ ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆՑ ՀԱՄԵՄԱՏՈՒԹԻՒՆ ԵՒ ՔՆՆՈՒԹԻՒՆ

*(Շարունակութիւն տես Բազմավէպ 1928, էջ 289)*

| ԶՄԻՒՌՆ. ՏՊ. | | ԲԻՒԶ. ՏՊ. — ԳԷՈՐԳԵԱՆ ՄԽԲ. | | ՁԵՌԱԳԻՐ ԱՃ — Գ. ՏԷՐ ՄԿՐՏՉ. |
|---|---|---|---|---|
| էջ. տող. | | էջ. տող. | | |
| 13 1 | զօրութիւն | 17 | զօրութիւն | զաւրութ (տողամիջում Ն = զարութՆ) |
| 7 | սայթաքին | 25 | սայթաքին | սայթաքեն |
| 9 | և մերթ | 18 2 | և երբեմն | |
| 9 | խորտակումն իսկ | 3 | խորտակումն իսկ | յուսաճեղում նոյն գրչից իսկ |
| 12 | ի հանդէպ | 10–11 | ի հանդէպ | (ի տողամիջում) |
| 17 | կողմանս վայրաբերին | 12 | կողմանս վարգին | |
| 17 | յընդհանուրս արշաւին | 13 | ընդհանուր արշաւին | |

*Համեմատութեանց շուրջ դիտողութենէ և քննութենէ առաջ՝ կ'անդրադառնանք մրարքի մասին մեր նախորդ յօդուածին, ոչ թէ նոր բան մ'ըսելու՝ այլ ցուցնելու համար թէ Հ. Արիս Վարդանեանի յօդուածը մրարքի*[1] *նկատմամբ բաց ի բանասէրի մը անվայել ոճէն՝ անճշդութիւններ և նոյն իսկ հակասութիւններ ալ կը պարունակէ։*

*Ան կ'ըսէ. «Այս հարցը ոչ անվայել որակումները կարող են լուծել». այսպէս ինքզինք կը դատապարտէ Հ. Արիս՝ Ղազիկեանի և իմ մասիս իր ըրած անվայել արտայայտութիւններովը. «և ոչ անիմաստ ջատագովութիւնները», ինչպէս ինք ըրած է անհարկի ջատագովելով Գալէմքեարը, «այլ միայն բնագրաքննական համեմատութիւնները» որոնց մէջ դժբախտաբար սխալած է, ինչպէս պիտի ցուցնենք։ «Հայ դասական լեզուին ծանօթ չէ ալքի աղտ, բիժ իմաստով մրարի գոյութիւնը». ուշ դնեն ընթերցողները որ Հ. Արիս Վ.ը կատարեալ յոռի շրջանի մէջ է. և ստուգիւ ան կ'ըսէ. Եզնիկի մէջ մրար կամ մրիր չի կրնար ըլլալ. ինչու. — վասն զի դասական լեզուի բառ չէ. — Իսկ երբ հարցնենք Հ. Արիսի թէ ինչու դասական չէ՝ կը պատասխանէ. վասն զի դասական հեղինակներուն քով չի գտնուիր այդ բառը։ Յայտնի է երբ դասական հեղինակին — Եզնիկի — քովէն*

1. Ազդարար, 22 Նոյ. 1928. Թ. 617.



ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ Гос. Публ. Библиотека ՀՍՍՀ-ССРА

A.R.A.R.@ digitised by

| | | | | |
|---|---|---|---|---|
| էջ. տող. | | էջ. տող. | | |
| 18 | ընդ բնաւս սլանան | 14 | ընդ բնաւս սլանան | ընդ բնաւ սլանան (տողամիջում մանր տառով ս = բնաւս) |
| 20–21 | արշաւիցեն | 17 | արշաւից(ի)ն | |
| 21 | ընդ հիւսիսի | 18 | ընդ հիւսիսի | ընդ հիւսիսի |
| 22 | չէ ինչ արգել | 18 | չէ ինչ արգել | չէ ինչ (ինչ յուսանցքում) |

ՃԱՌ Դ.

Ցաղագս յօդման ընդ դիմութեանցն կռապաշտից

| | | | | |
|---|---|---|---|---|
| 14 1 | անկիւնս | 22 | անկիւնս | անգիւնս |
| 8 | հարցուածս | 26 | հարցուածս | (հարցուածս բառը ջնջուածքով. հ տողամիջում աւայիճ վրյից) |
| 18 | մահու և արեան ծարաւի են | 19 11 | մահու և արեամբ ծարաւի են | |
| 20 | մերկացուցեալ | 13 | մերկացեալ | |
| 15 1–2 | առ փոյթ ի չծածկելոյ | 15–16 | առ փութի չծածկելոյ | |
| 3 | շանց ես ի կուր | 17 | շանց ես կուր | |
| 4 | անձնապուրծ | 18–19 | անձնապուր | |
| 6 | որոյ գկնի | 21 | որով զկնի | |
| 8 | եւ ոչն մերկէ | 24 | եւ ոչն մերկանայ | |
| 8 | ընկերին | 24 | ընկերին | ընգերին |
| 9 | ընդ դիմանայցէ | 25 | ընդդէմ դառնայցէ | |
| 10 | եւ ուրուչն | 26 | եւ ուրուչն | եւ որուչն |

Ջնջես մրարքը առանց բնագրաքննական փաստի՝ դասական ըլլալէ կը դադրի։ – Օրինակներու շարք մը մէջ բերած է, սակայն ոչ մէկը նպատակ և ոյժ ունի Եզնիկի բնագիրը խախտելու. կրնար զանց ըրած ըլլալ ամէնքն ալ։

Մենք մեր նախորդ յօդուածին մէջ վեր հանած էինք, ի պաշտպանութիւն բագրատունեան տպագրութեան՝ հեղինակութիւնը Էջմիածնի ձեռագրին՝ Աճառեանէն նոր գտնուած. չէինք կարծեր որ Հ. Արիս ձեռագրի հեղինակութիւնը մերժէր պաշտպանելու համար ամէն գնով՝ Գալէմքեարի կարծիքը։ Հ. Արիս միայն ծաղրանքը զատած է իբրև բնագրաքննական փաստ, իսկ ես բերեւօրէն(!) Էջմիածնի ձեռագիրը։

Աւելին կայ. Հ. Արիս որ յոխորտանք և ծաղրանքը փաստ առած էր նաև Հ. Արսէն Վ. Ղազիկեանի դէմ, կրնար հանգիստ թողուլ Գալէմքեարը և չհետևիլ անոր սխալին. Գալէմքեար ենթադրած է որ Զմիւռնեան տպագրութեան մառայլքը նոյնպէս թողուած է Գէորգեանէ կամ Տէր Յովհաննէսեանէն առանց փոփոխելու. և Հ. Արիս ալ ինքնին չէ քննած խնդիրը, և պարզապէս «Վարդապետն ասաց»ով մեկներ է. բայց բարեբախտաբար մեր քով կայ Գէորգեան սրբագրութեամբ Զմ. օրինակ մը ուր նախնական մառայլքը քերուած է և մրարքի է փոխուած. ի՞նչ կ'ըսէ ասոր բանասէր Հ. Արիս Վ. ա՞յս է բաւարար բանասիրական պաշարը որ ունենալ կը կարծէր և ուրիշները կը հեգնէր։

Mariès ալ Գալէմքեարի հետևած է. «Galemkhear s'appuyant sur la leçon de Smyrne, non infirmée(!) par la collation de Ter Yovhannessian, lisait մառայլքն «brouillard, brume, ténèbres» et rejetait մթարքն «saleté» comme une correction arbitraire des éditeurs de Venise»։ Բայց Մարիէս, աւելի արթուն քան բանասէր Հ. Արիսը, կը շարունակէ. «Mais մրարքն est bien la leçon du manuscrit, et Adjarian ne signale pas pour ce mot aucune variante. A supposer que les éditeurs de Venise aient restitué d'eux-mêmes մրարքն, ils seraient donc tombés juste[2]».

Շատ շնորհաւորելի է Մարիէս որ կը հետևի բնագրաքննական փաստի, և ձեռագրի հեղինակութիւնը կը ճանչնայ հակառակ Հ. Արիս Վ.ի։ Կը ցաւինք որ Հ. Արիս Վ.ի խայթող գրիչը մեզ ստիպեց գրել այս տողերը. զանց ըրած պիտի ըլլայինք զանոնք եթէ նա խծբծած չըլլար մեր պարզ և համեստ բացատրութիւնը, որ էր «Անցողակի կը յիշենք Հ. Գ. Գալէմքեարի առաջարկը, մրարքը՝ մառայլ կարդալու, որ սակայն փաստ մը չունի, (բնագրաքննական՝ ինչպէս պիտի ըսէր Հ. Արիս Վ.) որով և անընդունելի»։

Անցնինք քննելու քանի մը աչքառու կէտեր և սրբագրութիւններ։

---

2. Revue des études Arméniennes etc... էջ 93 (175).

digitised by A.R.A.R.@

| էջ. տող. | | էջ. տող. | | |
|---|---|---|---|---|
| 12-13 | որդոց | 20 4 | որդւոց | որդոց |
| 14 | եւ երեսն երեսն | 5 | եւ երեք երեք | |
| 15 | ուր մեզաւորք և արդարք | 6 | ուր մեղաւոր և արդար | |
| 16 | մահապարտամք | 7 | մահք տարաժամք | |
| 17 | պիտոյ է մեզ ընաւ | 9-10 | պիտոյ է մեզ ընաւ | պիտոեզընաւ = պիտոյ է զընաւ յիշ մեզ |
| 18 | թուել | 10 | թուել | թւել |
| 23 | արարիչ ասել | 17-18 | արարիչ ասել | արարիչ ասել (ասել լուսանցքում) |
| 16 6 | ախորժի... և զգործոզան | 25-26 | ախորժէ... և զգործելիս | |
| 7 | անընտանի | 21 1 | անընտանի | անընդանի |
| 10 | որում հիւլն անուն էր | 4 | որում հիւղն անուն էր | որում հիւղն անուանէր (առաջին գրչից ա ջնջուած, տողամիջում ո = ա-նուն էր) |
| 12 | ամենարուեստն | 6 | ամենարուեստն | ամենարւեստն |
| 16 | արուեստագիտութեան | 13 | արուեստագիտութեանն | արւեստագիտութեանն |
| 18 | վարել | 15 | վարել | վարեալ ա ջնջման նշանով = վարել |
| 19 | նորա զատուցանել | 17-18 | նորա յաղնուագոյնսն զա-տուցանել | |
| | ԺԱԹ Ե. Վասն եղծման ընդ դիմու-թեանցն հեթանոսաց Պատասխանի | | | |
| 17 6-7 | (չարիքն որ լինին) կացու-ցանեն | 22 1 | ... կացուցանեն | ... կացուցանէ |
| 17 11 | (անուանեն) թէ ամենեին | 7 | անուանեն թէ ի նմանէ արար զարարածս և կէսք հրամա-րեցին խնդրելոյ, որպէս թէ ամենեին | |
| 14 | ընդ դիմակցացն | 13 | ընդդիմակ(ց)ացն | ընդդիմակացն, լուսանցքում աց, = ընդդիմակացացն |

13, 25–6. — ԶԳԱՅԱԿԱՆԱՑՆ ԱՆՇՆՉԻՑ. Մարիէս կ'ըսէ թէ արդեօք կարելի չէ՞ սրբագրել «և զկայա-կան ածն անշնչից». խորթ և անլուր ձեւը դրած է համարելով թէ Եզնիկ հակասութեան մէջ է անշունչ և զգայական քովէքով դրած ըլլալով։

Ներուի մեզ ըսել որ ոչ թէ սրբագրութիւն է ըրածը, այլ սխալագրութիւն, խում-դում ձև մը և խաթարում բնագրին։ Ո՞ր կտոր մը հայերէն գիտցողը չի հասկնար թէ զգայականն ըսել է զգալի, շօշափելի, նիւթական, իբրև հակադրութիւն իմանալի իրերու, ինչպէս են հոգիները. և ճիշտ այս է խօսքին իմաստը «և ոչ նախանձի, զհրեշտակաց ասեմ և զհոգւոց մարդկան և զգա-յականացն անշնչից»։ Ինչպէս հայուն ցաւէն՝ հայը, նոյնպէս կարծեմ հայուն լեզուէն հայը միայն կրնայ ուղիղ հասկնալ։ (Revue ևն էջ 178)։

17, 21. — ՆՈՒԱՃԷՐ. Աճ. և Հ. Գ. Վ. Նահապետեան կ'ուղղեն նուաճէ, ներկայ, ինչպէս իմաստը կը պահանջէ. «Այլ նա ուսուսցի իբրև զկամս իւր լծեալ ի չորից երիվարաց զաշխարհս տեսա-նեմք... և զօրութիւն իւր ծածուկ... որ... ի հաւանութեան պահեալ նուաճէր»։ Սակայն Աճ.ի ձեռագիրը–Զմ.–Եզրտ. ամէնքն ալ նուաճէր ունին։

Այս կոչումին մէջ կարծեմ հարկ է ուսուսիկն ալ ուսանիկի փոխել՝ նախընթաց ձևին հետ համաձայնեցնելով։

17, 22. — ԲԱՅՑ ՄԻԱՅՆ ԱՅՍՑ ԿԱՌԱՑ. Խօսքը բացատութեան մը շուրջն ըլլալով «Ամենայն կառք ի համազգեաց երիվարաց լծին, բայց միայն այսց կառաց՝ որ ի չհամազգեաց լծեալ են» Աճա-ռեան կը նկատէ որ հարկ է բացառական դնել = յայսց կառաց, ինչպէս որ Թոռնեան ալ ուղ-ղած է նոտրագիր (Հատընտ. ընթերց. Եզնիկ. էջ 9)։

18, 13–14. — ԸՆԴ ԲՆԱԻՍ ՍԱՍՆԱՆ. Նորայր իր Հայկ. Բառաքննութեան մէջ (էջ 27–28) կը սըր-բագրէ ընդ բնաւ, համարելով որ հետևորդ բառին ս ն է որ կպեր է բնաւ:ին վրայ, պատճառաբա-նելով թէ Եզնկայ քով միակն ըլլալով՝ հաւանօրէն սխալ է։ Թէպէտ Թոռնեան իր Հատընտիրնե-րուն Ա. տպ.ին մէջ (1866, էջ 10) ընդ բնաւս դրած էր, սակայն Բ. տպ.ին մէջ (1891 էջ 10) ընդ բնաւ սրբագրած է Նորայրի համեմատ։ Համարինք սոոյգ Նորայրի ըսածը թէ միակն է այդ ձևը. սակայն պէտք է նկատել որ Զմ. տպագիրը ընդ բնաւս է ունկից Բագրատունին ալ արտատպեր է և գոյութիւն չունի Գէորգեան կամ ուրիշ սրբագրութիւն. ուրեմն ըսել է որ Զմ.ի նախագաղափարին համեմատ է. համեմատ նոյնպէս Աճ-Գ. Տ. Մ.ի ձեռագրին, որուն մէջ

digitised by A.R.A.R.@

| էջ. տող. | էջ. տող. | |
|---|---|---|
| 18 մատագրութիւն | 18 մատագիրութիւն | մատագիրութիւնն |
| 18 4 իրաւամբք | 23 իրաւամբք | իրաւամք |
| 18 6 զի ուր | 23 1 զի ուր | յուսանձգրում որ, աւելացրած վերեւից ւ = ուր |
| 18–19–20 6,9,20,5 ի տեղւոջ | 23–25 4–5–13 ի տեղւոջ | ի տեղոջ (ի տողի վրայ) |
| 10 եթէ բոլոր | 6 եթէ զամենայն | |
| 15 բոլոր գնա | 14 բոլոր գնա | գբոլոր գնա |
| 16 միայն ի հիւլին | 15 միայն ի նմանէ | |
| 21 անջրպետող… երկոցունց | 21 անջրպետ… երկոցուն | |
| 22 քան զերկոսին: Ըստ այնմ և ոչ | 22 քան զերկոսին. և ոչ | |
| 23 երեք. այսինքն Ած. հիւլն և անջրպետն | 24 երեք. Ած. և հիւղն և անջրպետն | |
| 19 2 անջրպետող քան զերկոսին | 26 անջրպետն քան զերկոսին | (անջրպետն քան) զերկոսին (տողամիջում ս ? = զերկոսինս) |
| 3 անզարդ և անարգ | 24 2 անզարդ և անարդ | անզարդ և անարգ (գ ջնջուած = անարդ) |
| 6 ապա ուրեմն | 6 ապա ուրեմն | յիք ուրեմն |
| 7 յանարգս | 7 յանարգս | յանարգս |
| 14 ի զարդս և ի յարգս | 17 ի զարդս ի յարգս | |
| 18 որպէս զատիչ ի նմանէ | 23–24 որպէս զատիչ ի նմանէ (զատ ինչ) | որպէս զատիչ ի նմանէ |
| 21 եւ զհիւլէ զայն | 25 3 եւ զհիւղեայն | եւ զհիւղեայն |
| 20 3 ապանջական | 11 ապանջական | ապընջական (ա՛ զամիջում ս = ապընջական) |
| ՃԱՌ Չ. | | |
| Ցոյց թէ Աստուած ոչ է պատճառ չարեաց | | |
| 20 17–19 ի յարգս… զարդուց և յարգելեաց | 26 և զարդուց և արդուց | |
| 21 2 միայն (յարգս և զարդս) | 26 4 միայն (արդս և զարդս) | յիք միայն |
| 4–14 յընթերակայէ | 7–20 յընթերակացէ | |
| 11 ոչ եւ քարինք կոչին | 15 ոչ եւ քարինք կոչին | ոչ և քարինք կոչեն |
| 10 զոր ի չինուածն | 13 զոր ի չինածն | |
| 13 տաճարս չինել այլ | 18 տաճարս, այլ | |
| 13 արուեստին է որ ի բնութեանն | 18–19 արուեստին է որ ի բնութեանն | արուեստն որ ի բնութեանն է |
| 16–19 զարուեստագիտութիւնն… զարուեստն | 22 զարուեստագիտութիւնն… զարուեստն | զարուեստագիտութիւնն… զարուեստն |

հետաքրքրական է որ սկզբնական ձեւն ընդ բնաւ է, սակայն ինչպէս կ'ըսեն հրատարակիչները՝ «տողամիջում մանր տառով ս» կայ, անշուշտ Թովմա Վ.ին սրբագրութեամբ ուստի = ընդ բնաւս. այս ալ ուրեմն Աճ.ի ցոթ ձեռագրի հեղինակութենէն։

Հետեւաբար, ըստ մեր կարծեաց, հաւանօրէն կարելի է պահել ընդ բնաւսը իբրև ուղիղ ձև։

19, 7. — ՄԻՄԵԱՆՑ ՄԱՀՈՒ ԵՒ ԱՐԵԱՄԲ ԾԱՐԱՒԻ ԵՆ. Հ. Գ. Վ. Նահապետեան կ'ուզէ սրբագրել «միմեանց մահու և արեան ծարաւի են»։ Սակայն արեամբն է ուղիղը. նախ որ հակառակն ապացուցանելու համար բնագրական և լեզուական փաստ կը պակսի. և ստուգիւ ԱՃ–Տ. Գ. Մկրտչեան ալ արեամբ ունին։ Աւելին կայ ի նպաստ արեամբի. վասն զի Ջմ. օրինակին մէջ տպուած է արեան, իսկ Բագրատունի զայն արեամբ սրբագրած է՝ անշուշտ համեմատ և հեղինակութեամբ ցոթ ձեռագրին՝ Գէորգի սրբագրութեամբ։

Հուսկ, իբրև դասական կամ ոսկեղէն լեզուի յատուկ՝ ծարաւի արեամբ է և ոչ արեան. և այդ ընտիր ոճը միակը չէ հոս. Ոսկեբերանի ապաշխարութեան ճառին մէջ ալ ունինք. «Որդանցն բացեալ զբերանս իւրեանց՝ ծարաւին արեամբ մեղաւորաց»։

Նման ոճեր և մի և նոյն բայերու զանազան խնդիրներ, յայտնի է, շատ են նախնեաց քով. այս տարբերութեամբ որ ոսկի լեզուի գեղեցիկ և պերճ ձեւերուն հետագայ դարերը կը փոխանակեն դիւրին և հասարակները. այսպէս համարելու է ծարաւի արեանն ալ։

Հոս կը վերյիշեմ Բաբգէն Ս.ի վճիռը «Եզնկի տպագրութիւնները գիտնօրէն եղած չեն» (Եզնիկ. Հնդս. Ամս. 1907, էջ 310) և ընթերցողին մատնանիշ կ'ընեմ համեմատութեան մէջէն սա էական և կարեւոր սրբագրութիւնները, որպէս զի իմացուի թէ արդար չէ այն, յատկապէս Բագրատունեանին համար. Օր. Ջմ. խտրխյի կը դնէ, մինչ Բագրատունին՝ խորխոլի՝ 10,21 համեմատ Աճ.Ջ. ի։

| էջ. | տող. | | էջ. | տող. | | |
|---|---|---|---|---|---|---|
| | 17-18 | անձնաւորց ինչ... կարեն | | 24-25 | անձնաւոր ինչ... կարէ | անձնաւորց |
| | 22-23 | զարուեստն, արուեստն, զարուեստն | 27 | 4-6 | զարուեստն, արուեստն, զարուեստ | զարուեստն, արուեստն, զարուեստ |
| 22 | 2 | և եթէ | | 8 | և եթէ | եւ եթ տողամիջում փոքրատառ է = եւ եթէ |
| | 4 | յարգուց | | 11 | արգուց | |
| | 6 | (և ոչ արգասիքն) նիւթ | | 13-14 | (և ոչ արգասիս) նիւթ(ոյ) | ... նիւթ |
| | 7 | (Աստուած ընտրեաց զբարին) ի մթեր | | 14 | ... ընտրեաց ի մի թեր | ... ընդրեաց (ի մի թեր) |
| | 7-8 | (և զչարն) մրրախառն | | 17 | (և զչարն) մրրախառն | ... մրրախառնն |

ՃԱՌ Է.

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | Հարցմունք թէ չարն ուստի է և զինչ է | | | | |
| | 13 | Զարիք որք լինին | | 20 | Զարիքս որ լինին | |
| 23 | 2 | լինիցին | 28 | 3 | լինիցին | լինին (յուսանցքում ից = լինիցին) |
| | 3 | զի ստանութիւն չէ անձին ինչ | | 5 | ... անձն ինչ | |
| | 6 | ի ճարտարութենէ | | 9 | ի ճարտարութենէ | ի ճարտարութենէ (ի տողամիջում) |
| | 8 | անուն առնուն զանուանս | | 12 | անուն առնուն զանուանս | անուն առնուն զանուանս |
| 24 | 2 | յամառեցեալց կացցեն | 29 | 8 | յամառութեան կացցեն | յամառութեան կացեն (տողամիջում մանրատառ ց = կացցեն)։ |
| | 6-14 | անհեթեթ | | 15-26 | անհեղեղ | |
| | 22 | Ուստի՞ լինին ուրեմն։ Արգասիք. | 30 | 12 | լինին։ Ուրեմն արգասիք. | լինք ուրեմն |
| 25 | 1 | այլ զի ի չան դարձան | | 14 | այլ զի ի չան դարձեալ | լինք զի |
| | 12 | եթող նոյնպիսիս ապականութիւն | 31 | 4 | եթող նոյնպիսի՝ յապականութեան | եթող նոյնպիսիս յապականութիւնն |
| | 18 | եւ զկնի առնլոյ՝ | | 12 | և արդ յառնլոյ | |
| 26 | 9 | ի հարկէ զչարիսն բանադատիչս. | 32 | 6 | հարկ է թէ զչարիսն բանադատիչս | զբանադատիչս (յուսանցքում ծոյծ գրչից չարիսն = զչարիսն բանադատիչս)։ |

ՃԱՌ Ը.

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | Յաղագս ոչնչացուցման հիւլէիցն | | | | |
| | 23 | առ ածեն զմեզ | | 15 | ածեն զմեզ | |
| 27 | 18 | չգոյր... յորում չէր անարար | 33 | 13 | չգոյր... յորում էր անարար | |
| | 19 | պարզականքն եւ անարարք | | 15 | պարզականքն և (ս) անարարք(ն) | պարզականքն և անարարքն |

Զմ. փայրաբերիճին դէմ կը դնէ փարգիճ (10, 12). Զմ. չիչուացեա գրեր է մեկնելով՝ մինչ ուղիղն է՝ խափուցանիցես, ինչպէս տպագրեր է Բագրատունի (15, 26)։

Արդ ու զարդը որ թէ՛ Զմ. և թէ Աճ. Զ.ի մէջ քանի մ'անգամ յարգ է, Բգրտ. տպագրին միշտ արդ ու զարդ. (24, 2–7)։

22, 21. — ՔԱՆԶԻ ՈՉ ԵԹԷ ԱՆԻՐԱԻՈՒԹԵԱՄԲ ԻՆՉ ՑԱՂԹԵԼ ՋԱՆԱՄՔ, ԱՅԼ ԻՐԱՒԱՄԲՔ ՋՃՇՄԱՐԻՏՆ ՈՒՍԱՆԵԼ. — Հ. Գ. Վ. Նահապետեան կ'առաջարկէ ուսանելը՝ ուսուցանելի փոխել։ Սակայն ըստ մեզ կարելի է ուսանել թողուլ քանի որ Աճ. Գէորգեան և Զմ. տպագիրը համաձայն են, և յետոյ կարելի է մեկնել այսպէս դիմաւորի վերազելով «այլ զի զճշմարիտն ուսցին»։

26, 26. — ՔԱՆԶԻ ՈՉ ԱՆՁՆԱԻՈՐԱՑ ՁԱՐՈՒԵՍՏՆ ԿԱՐԷ ՑՈՒՑԱՆԵԼ. — Մարիէս[1] ցուցանելի տեղ՝ ծնուցանել կ'առաջարկէ, համեմատութեամբ 28, 2ին «կարէր արդիւնս ծնուցանել». սակայն հոս ալ հարկ է ըսենք որ Աճ-Գէորգեան-Զմ. համաձայն են անխտիր. յետոյ ցուցանելն ալ կրնայ բաւարար իմաստ մը տալ նախադասութեան։

34, 21 Յայտնի է թէ Գէորգեան սրբագրութիւնը ուղիղ և հեղինակաւոր է, և այս կը տեսնուի երբ Էջմ. ձեռագրի սրբագրութիւնները (Թովմա Վ.ի ձեռքով) կը համաձայնին, ինչպէս հոս 34, 21 յետոյ 35, 21 ուր Գէորգ–Բգր. յառաջագոյն է առանց փոխելու Զմ. տպ.ը, իսկ Էջմ. յառագոյնը ուղղուած է յառաջագոյն։ Նոյնպէս 36, 7-15 Զմ. գործողացը փոխուած գործելեաց համեմատ Էջմ. և 39, 18 Զմ. գործող, Գ–Բգրտ. գործելին՝ ըստ Էջմ.։

1. Revue ն. էջ 97 (179) և 41 (123)

digitised by A.R.A.R.@

| | | |
|---|---|---|
| էջ. տող. | էջ. տող. | |
| 28 4 և զնոյ ինքեան ինչ | 26 ինքեան ինչ | և ընքեան ինչ |
| 5 բայց ընկերին. և անուի | 34 1–2 բայց ընկերին և անուի | բայց ընգերին և անդի |
| ԳԼՈՒ Թ. | | |
| Զարն ոչ է գոյացութիւն | | |
| 28 16 չարիքն յայտ լիցին | 34 12 չարիքն յայտ լինիցին. | |
| 29 1 անձինք ինչ չարիքն իցեն | 19 լիք իցեն | լիք իցեն |
| 3 մարդ իցէ, այլ՝ կամայական | 21 մարդ իցէ, կամական | մարթ (թ. ջնջուած եւ ուղղուած տողամիջում դ. = մարդ լիցէ, կամական) |
| 22 յառաջագոյն իսկ | 35 21 յառաջագոյն իսկ | յառագոյն (տողամիջում աջ = յառաջագոյն) |
| ԳԼՈՒ. Ժ. | | |
| Թէ չարն կամաց գործ է և ոչ բնութեան | | |
| 30 7–9 Արդ զառաւած եթէ բարի և բարեբար ասիցեն. հարկ է թէ ի բարի և ի բարեբարն չարութիւն ինչ ոչ մերձենայ. | 36 1 Արդ զԱստուած բարի՝ և բարեբա՞ր ասիցեն. Հարկ է թէ բարի և բարեբար ասեն, և չարութիւն ինչ ի նա ոչ մերձենայ. | |
| 11–17 Արդ եթէ… ընդէ՞ր ի գործողացն չարեացն… վրէժս պահանջէ… ի վերա գործողացն | 7–15 Եթէ… ընդէ՞ր ի գործելեաց չարեացն… վրէժս պահանջիցի… ի վերայ գործելեացն | |
| 31 3 ի պատիժս մատնին | 19 ի պատիժս մատնեն | |
| 16 Եւ թէպէտ | 37 10 Եւ թէպէտ | |
| 18–9 մինն բուն հայր լինի, միւսն զօրութեան | 13 մին բուն հայր լինի, միւսն զօրութի | |
| 33 7 Զի եթէ խոփ են | 39 11 զի եթէ խոփ են | լիք զի |
| 12 գործօղն է | 18 (չարութեանն) գործելին | լիք թէպէտ |
| ԳԼՈՒ ԺԱ. | | |
| Թէ անձն իշխանութենէ ի մեզ պատճառի չարութիւնն | | |
| 34 2–5 այլ ունել զայն յանձնիշխանութենէ և յազատութենէ… պայազատաց որդւոցն ժառանգել . | 40 1–4 ունել անձնիշխանութիւն և ազատութիւն … պայազատացն ժառանգել | |

Դարձեալ 41, 9 Զմ. ի յառուրիւն ինչ, բզրտ. տպ.ը՝ առ եղեռանէ ըստ Իջմ. Նոյնպէս 43, 2 Զմ. ունի որոյ վախճանն յաւիտենական անեղծութիւն է. մինչ Գէորգեան սրբ. որ յաւիտենական անեղծութիւնն է. յետոյ նոյն էջին Զմ. հակիները Գէորգ–Բզրտ. փոխած են ժուել՝ և այս ըստ Իջմ. ձեռագրին։

36, 16. — ՈՐՊԷՍ ԵՒ ԱՅԺՄ ՍՊԱՆՈՂՔ ՈՐ Ի ՊԱՏԻԺՍ ՄՏԱՆԵՆ. — Հ. Գ. Վ. Նահապետեան[1] կը փորձէ մատնենը՝ մատնին ուղղել. սակայն կարելի չէ ընդունիլ քանի որ Աճ. ձեռագիրն ալ մատնեն է, և յետոյ Զմ. տպ.ը որ արդէն մատնին է՝ Գէորգ զայն ուղղած է մատնեն. ասկից յայտնի է թէ բնագիրը մատնեն է։

45, 13. — ԵՒ ԵԹԷ ԶՆԱԽԱՆՁՈՒԻՆ ԵՒՍ ՃՇԴԻՒՔ ՔՆՆԻՑԵՍ. — Նորայր[2] ճշդիւքը կը սրբագրէ ճշդիւ։ Եթէ ընդ քնաւսը (18, 13) հաւանական չէ, սակայն ճշդիւը ուղիղ կը թուի, քանի որ Աճ. ձեռագիրն ալ ճշդիւ ունի։

Նորայրի մէջ բերած բոլոր օրինակները ճշդիւ են, որով Աճ. Զ.ի հեղինակութեան վրայ աւելնալով ասոնք կը մերժեն ճշդիւք ձևը, որուն ք էն, ինչպէս կը գրէ Նորայր, յաջորդ բառէն առնուած է օրինակողին կողմէն։

47, 26 — 48, 2 — 49–50. — Դարձեալ կ'արժէ նկատել նշանակուած էջերուն մէջ բոլոր տարբերակները. կը տեսնուի Գէորգեանի համաձայնութիւնը Իջմ. հետ. յետոյ Զմ. տպ.ին ազգական ձևերը, հուսկ Գէորգեանի առաւելութիւններն ալ յատկապէս երբ չկան անոր մէջ։

---

1. Ուղղագրութիւնք եւ. էջ 284։
2. Հյկ. Բոքեն. եւ. էջ 28–29։

digitised by A.R.A.R.@

| էջ. | տող. | | էջ. | տող. | | |
|---|---|---|---|---|---|---|
| | 6 | Եւ արդ մարդն առեալ... ում և կամի ծառայէ | | 5 | Եւ արդ առեալ... ում կամի ծառայանայ | |
| 35 | 4 | ոչ եթէ ի յոռութիւն ինչ | 41 | 9 | ոչ եթէ առ եղեռանէ | |
| 36 | 12 | որոյ վախճանն յաւիտենական | 43 | 2 | որ յաւիտենական անեղծութիւնն է | |
| | 17 | Բայց իրաւունք այն է | | 8 | Բայց իրաւամբ այն է | |
| | | ՃԱՌ ԺԲ. | | | | |
| | | Թէ անռալոյ Աստուծոյ և ոչ անաալոյ անձն իշխանութիւնն է պատճառ | | | | |
| 37 | 9–10 | հակել ի չար... յոր հակիցի | | 16–18 | ժտել ի չար... յոր ժտիցի | |
| | 15 | և անտի լինէր սկիզբն | | 25 | և անաի լինէր սկիզբն | և անդի լինէր սկիզբն |
| 38 | 1 | ցուցանել կարէ ոք | 44 | 8 | ցուցանել կարէ ոք | չիք կարէ ոք |
| | 13 | մերկացնել կամեցաւ | 45 | 1 | մերկանալ կամեցաւ | |
| | 14–15 | կամիցիս խնդրել... իմասցիս պատճառ | | 2–4 | կամիցի(ն)... իմասցին ըզ-պատճառն | կամիցիս |
| | | ՃԱՌ ԺԳ. | | | | |
| | | Թէ սատանայ ուստի հնարեցաւ զչարն Ադամայ, այսինքն ի պատուիրելոյն Աստուծոյ | | | | |
| 39 | 19 | սատանայ, չար իմացաւ զըստունգանելն մարդոյն յԱստուծոյ | 46 | 7–8 | սատանայ չար զստունգանելն յԱստուծոյ իմացաւ | |
| 41 | 2 | զայն յառաջագրեաց մարդոյն | 47 | 15 | զայն յառաջադրեաց մարդոյն | չիք զայն յառաջագրեաց մարդոյն |
| | 9 | հրապուրեաց թշնամին | | 26 | ժտեցոյց թշնամին | |
| | 11 | ցանզի ոչ եթէ ստուգիւ գիտէր | 48 | 2 | որպէս զի ոչ եթէ ստուգեալ գիտէր | |
| | 13 | կարծեօք ի դերևս մատուցեալ | | 5 | ... ի թեթուս մատուցեալ | |
| | 18 | անհնազանդութիւնն | | 12 | անսաստութիւնն | |
| | 22–22 | այնպիսի իրաց պատճառ. որ միայն նշան էր հնազանդութեան | | 16 | չիք որ միայն նշան էր հնազանդութեան | չիք նոյնպէս |
| 42 | 17 | առ ի չգիտենալոյ եկէր | 49 | 14 | առ ի չգիտանս եկեր | |
| 43 | 6 | կոխեաց զպատուիրանն | 50 | 6 | զընկէց զպատուիրանն | զընգեց զպատուիրանն |
| | 18 | Եւ ոչ թէ չար և չարի արարիչ | | 23 | Եւ ոչ չար և չարչարիչ | |
| 45 | 23 | պատամբ. ապստամբի | 53 | | ապստամբ... ապստամբի | զապստամբ (10, 13, 14, 18, 20) ապստամբի |

46, 26. — ՍԱՏԱՆԱՅ ՉԱՐ ԶՍՏՈՒՆԳԱՆԵԼՆ ՄԱՐԴՈՅՆ ԱՍՏՈՒԾՈՅ ԻՄԱՑԱՒ։ — Բարգէն Սրբազան[1] մեծ ճիգ մ'ունի երկարօրէն քաշքշելով նոր իմաստ մը տալու այս խօսքին, հակառակ իր պարզ և բնական իմաստին, ինչպէս որ ակնարկած է Թոռնեան։ Սրբազանը կ'ուզէ անպայման չարը սատանային կպցնել և դուրս հանելու համար ուզուած իմաստը՝ առանց բնագրի հեղինակութեան՝ ըստ կամս Աստուծոյ՝ յԱստուծոյ կը փոխէ, ուզելով մեկնել թէ՝ Չար սատանան՝ Աստուծմէ իմացաւ մարդուն ստունգանելը. բայց ասկից ոչ իմաստ կ'ելլէ և ոչ ալ Եզնիկի նպատակին և ոգւոյն կը համապատասխանէ. մինչ չարը՝ իմացաւ բային տալով՝ և մնացածը թողլով ըստ բնագրին՝ կ'ունենանք. Սատանայ՝ չար՝ զստունգանելն մարդոյն Աստուծոյ՝ իմացաւ, այսինքն Սատանան հասկցաւ որ մարդուն Աստուծոյ չհնազանդիլը մեղք է, չար է։

Եւ այս պարզ իմաստը անով ալ կը մեկնուի որ սատանային դիտաւորութիւն ու գործն է մարդը չարիքի, մեղքի մէջ ձգել. բայց ի սկզբան անգէտ էր, կամ մեղանչելու ոչ առիթ և ոչ հնարք կար. իսկ երբ լսեց թէ արգիլուած պտուղին ճաշակումը մահ պիտի բերէ մարդուն՝ հասկցաւ որ անհնազանդութիւնը չար է, մեղք է, անոր համար, ինչպէս վրայ կը բերէ Եզնիկ «զմարդն յայն յօժարեցոյց[2]»։

47, 26. — ԱՅԼ ԿԱՐԾԵՕՔ Ի ԹԵԹՈՒՍ ՄԱՏՈՒՑԵԱԼ. — Հ. Գ. Վ. Նահապետեան[3] կ'առաջարկէ ի

1. Հանդէս Ամս. 1907 էջ 313–4.
2. Հառընթիր ևն 1891 էջ 14.
3. Ուղղագրութիւնք ևն էջ 284.

digitised by A.R.A.R.@

| էջ. | տող. | | էջ. | տող. | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | ՃԱՌ ԺԴ. | | | | |
| | | Թէ սատանայ ոչ է բնութեամբ չար | | | | |
| 44 | 11 | կամիցի առնել եւ ոչ առնել | 51 | 19 | չիք եւ ոչ առնել | |
| 45 | 23 | և յայն կրթել զմարդիկ | 53 | 9 | ուսուցանել մարդկան | |
| 46 | 10 | յորմէ երևի թէ | | 22 | չիք | չիք նոյնպէս |
| | 12 | այլափոխիւր | | 25 | փոխէր | |
| | 19 | ըստ ձեզ | 54 | 4 | ըստ ձեզ | չիք ըստ ձեզ |
| | | ՃԱՌ ԺԵ. | | | | |
| | | Հակառակութիւնք հեթանոսաց ի ջատագովութիւն սատանայի | | | | |
| 49 | 11–13 | հնարի... մարթացին | 56 | 26 | հնարեալ... մարթիցեն | |
| | | ՃԱՌ ԺԶ. | | | | |
| | | Թէ ոչ բնութեամբ են չարիքն. ընդդէմ հեթանոսաց | | | | |
| 51 | 8 | ի յանդգնութեան յամառեալք | 59 | 2 | հաւանութեանց՝ յամառեալ | |
| 52 | 12 | և նու զսկեսուր իւր | 60 | 7 | և նու զսկեսուր | |
| | 23 | անձանց իւրեանց զանարգանաց | | 22 | զանցնիւր զանարգանաց | |
| 53 | 14 | ցասնու և զայրանայ | 61 | 14 | ըմբոստանայ | |
| 54 | 18 | ի պէսս մարդկան արարան | 62 | 25 | ի պէսս արարան | |
| 55 | 7 | և ի նմանէ թիրակէ | 63 | 16 | և ի նմանէ թերիակէ | |
| 56 | 4 | փոշիմանեալ | 64 | 17 | փաշաման | |
| 57 | 4 | ճրագուն դեղ լինի | 65 | 24 | ճրագուն դեղնեղի լինի | |
| | 9 | և ամենայն ինչ վնասակար | 66 | 5 | և ամենայն ինչ վնասակար | նորա ամենայնին վնասակար |
| | 13 | վարազի որ զազանագոյն | | 10 | վարազի՝ որ զազանագոյն | վարազի որ վարազագոյնն |
| 58 | 1–2 | Եւ զհազար (որ է մանուլ) | | 26 | Եւ զհազար | |
| | | ՃԱՌ ԺԷ. | | | | |
| | | Ի սուրբ գրոց ցուցանի թէ չարն ոչ է ստեղծեալ ինչ | | | | |
| 60 | 6 | զանուցողին | 69 | 5 | զանուցանելեաւն | |
| | 10 | կարաւիչ ցուցանէ | | 12 | կարաւիչս ուսուցանէ | |
| 62 | 7 | ապաքէն ակար էր | 71 | 19 | չիք ապաքէն ակար էր | |

*թերուսը՝ ի թերեւսի փոխել, անշուշտ այն պատճառով որ միակն է այդ բառը նախնեաց քով և անյայտ՝ ինչպէս կ'ըսէ Հայկազ. բառգիրք։ Սակայն միւս կողմէն կարելի չէ ընդունիլ Հ. Գ. Վ.ի առաջարկը քանի որ անլուր է թերևսի վրայ նախդիր դնելը. ինչպէս նաև հակառակ Եզնկի ձեռագրին և տպ. օրինակներուն։*

50, 3-6. — *Բոլոր տարբերութիւնները նշանակալից են. Գէորգեան սրբագրութիւնները որ համաձայն են Էջմ. ձեռագրին, առանց հետևելու վերջինոյս սխալագրութեան. յաւելումներն ալ որ կը նշմարուին Զմ. տպագրին վրայ Գէորգին սրբագրութենէն՝ չեն կրնար քմահաճ նկատուիլ ինչպէս կը փորձուի ըսել Մարիէս իր գործի ընթացքին առանց ո և է փաստի։ Տեսանք թէ ինչպէս Աճառեան ալ Էջմ. ձեռագրին պակասաւոր տեղերուն՝ տալով հանդերձ լրացնելու իրաւունք (անշուշտ բնագրաքննական ուսումնասիրութեամբ), քմահաճ կը ցուցնէր զանոնք անգամ որ Բագրատունին ներմուծած էր Գէորգի սրբագրութենէն։*

*Կարելի է ուշադրութեամբ քննել և ըմբռնել Գէորգեան սրբագրութեան թանկագին արժէքը* 53, 9. 61, 14. 66, 5 *ուր Էջմ. Զ.ը յայտնապէս սխալ ունի, նոյնպէս* 66, 10։ *Գարձեալ* 69, 5. 69, 12. 74, 10. 77, 21։

53, 9–10. — ԱԳՈՍՏԱ՞ՄԲ ԹԷ ԱԳԱՍՏԱՄԲ. — *Այս հարցումը կամ քննութիւնը Աճառեանինն է*[1]։ *Նա իր նորագիւտ ձեռագրին մէջ հանդիպած է, ինչպէս կը վկայէ, ապաստամբ ձևին ամէն անգամուն որ այդ բառը կը գտնուի. կը ջանայ լեզուաբանօրէն ցուցնել թէ ապաստամբ ուղիղ ձևն է և հնագոյն որ առաջ կու գայ ապա՝ իրանեան ծանօթ նախամասնիկէն և ստամբակ պահլաւ*

1. *Քննութիւն եւ. էջ 71–73.*

digitised by A.R.A.R.@

| էջ. | տող. | | էջ. | տող. | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | ԳԼՈՒ ԺԸ. | | | | |
| | | Ցաղագս թէ ցաւ և մահ՝ պատիժք մեղաց են և ոչ արարածք | | | | |
| | 18 | հաստարակաց | 73 | 3 | հաստարակաց | հաս ակաց (այսպէս) |
| 62-63 | | մինչև կալցես զդարձն անդրէն | | 4 | մինչև լիցի քեզ դարձ անդրէն | |
| 64 | 11 | զորովայնիր բարբառով | | 25 | աղերսալից բարբառով | |
| | 19 | ի նմին աւուր մեռանիս | 74 | 10 | ի նմին աւուր մեռանիս | յիշ աւուր |
| 65 | 22 | զԱստուծոյ հրամանն ի բաց ընկեցեալ | 75 | 16 | զԱստուծոյ հրամանն զընկեցեալ | ... զընկեցեալ |
| | | ԳԼՈՒ ԺԹ. | | | | |
| | | Թէ Աստուած ոչ արար և ոչ է պատճառ մահուան | | | | |
| 66 | 17 | զուք իբրև զմի յիշխանաց | 76 | 7 | դուք իբրև զմարդիկ մեռանիք, իբրև զմի յիշխանաց | |
| | 19 | Ես ոչ զձեր մահն կամէի, և ոչ ընդ իշխանութեամբ վատ խրատատուին | | 9 | Ես ոչ ընդ ձեր մահ կամէի, և ոչ ընդ իշխանին վատ խրատատուին | |
| | | | 77 | 21 | կանխագէտ | կանխագէր (տողամիջում ուղղուած են = կանխագէտ էր). |
| | | | 78 | 4 | գալոյ է որդին | ... էրգին (տողամիջում ո = է որդին |
| | | ԳԼՈՒ Ի. | | | | |
| | | Թէ վասն է՞ր Աստուած զմահն ոչ արգելու | | | | |
| 70 | 5 | այլ ազգ ես լինին մահք | 79 | 23 | այլազգ ես, ասին մահք | |
| | 14 | մատուցանողացն | 80 | 8 | մատուցանելեացն | |
| 72 | 4-6 | բազում անգամ զծառայն աէրն (արն) առաջի նորա զան հարկանէ, զի... լինիցի մատավարժ | 82 | 5-7 | Բազում անգամ զծառայ այր առաջի նորա զան հարկանեն, զի... լինիցի մատավարժ | |
| | | ԳԼՈՒ ԻԱ. | | | | |
| | | Թէ վասն է՞ր անմեղք տանջին ի զիւաց | | | | |
| 72 | 12 | Արդ տուսցուք վասն հարցանելոյ ոմանց, եթէ մեղաւորք | | 11 | Այս տուացաւ վասն հարցանելոյ ոմանց թէ մեղաւորք | |

*բառէն՝ ծանօթ նշանակութեամբ։ իսկ ապաստամբը՝ հետագայ դարերուն երբ բառերը սղուիլ սկըսան միջին աերու կորուստի օրէնքով՝ դարձաւ եղաւ ապստամբ։*

69, 18. — ՉՔԱՐԲՍ ԻԳԱԿԵՐՊՍ ԿԱԼԵԱԼ. — *Հ. Գ. Վ. Նահապետեան*[2] *հոս ալ սրբագրութիւն մը կ'ընէ իգականը իժականի փոխելով։*

*Թէև յինքեան շատ յարմար և գեղեցիկ սրբագրութիւն է, սակայն Աճ-Գէորգեան ձեռագիրներու և Զմ. տպ.ի լռութիւնը կամ համաձայնութիւնը թոյլ չի տար մեզ այդ փոփոխութիւնը կատարել։*

84, 25. — *Զայն (Տէրն) իսկ։ — Հոս տպագրի սխալ է Ցէրնի պակասը և ոչ Գէորգեան սրբագրութիւն, ինչպէս մէկ երկու աննշան վրիպակներ ալ որոնք զանց ըրինք նշանակել։*

89, 17. — ԵՒ ՈՉ ԳԱԶԱՆՔ ՍԳԱՆԱՆԵԼ ՑՕԺԱՐԵՆ. — *Զմ. տպագրին վրայ կարմրագեղով փոխանակ սպանանելոյ՝ առնանել է. հաւանօրէն ոչ Գէորգեան սրբագրութիւն և ոչ Բագրատունիի ժամանակէն, քանի որ գիր, թանաք բոլորովին տարբեր են, և տպագրութեան մէջ ալ չէ անցած. Աճ. ձեռագիրն ալ սպանանել է, որով անվաւեր ձև մըն է առնանելը։*

*Սակայն եթէ իմաստը քննենք, կը տեսնենք որ ամբողջ խօսքը վնասելու վրայ է. «թէ անմեղի ումեք ոչ դևք մեղանչել կարեն, և ոչ գազանք առնանել յօժարեն, որպէս ոչ Դանիէլի գազանքն վնասեցին և ոչ երից մանկանց հուր հնոցին»։*

---

2. Անդ.

| էջ. տող. | | էջ. տող. | | |
|---|---|---|---|---|
| 73 1 | առաքինացեալքն | 82 20 | առաքինացեալքն | առաքինեալքն |
| 74 17 | զայն տէրն իսկ | 84 25 | զայն իսկ | զայն տէրն իսկ |
| 75 10 | ի փախուստ զնան | 85 19 | փախստական զնան | |
| 22 | յաստուծոյ արժանեացն | 86 11 | արժանիցն | |
| 76 4 | և մանաւանդ զմոլիսն | 19 | և մանաւանդ զմոլիսն | |
| ՃԱՌ ԻԲ. Թէ դևքն առանց հրամանին Աստուծոյ չկարեն ի մարդ մտանել | | | | |
| 78 4–5 | և զկենդանանալն և զքանաւորիլ ըստ հոգւոյ | 88 16 | և զփչումն հոգւոյ նոցա | |
| 23 | նոցա ինչ ոչ վնասիցէ | 89 13 | և ոչ մեղանչեցէ | |
| ՃԱՌ ԻԴ. Թէ հրեշտակք և դևք և հոգիք մարդկան անմարմինք են | | | | |
| 80 11 | որպէս զի ցուցցէ | 90 16 | որպէս զի ասիցէ | |
| 82 3 | ասորիքն ասեն, այսն շնչէ | 92 8 | ասորնեայք ասեն՝ այս շնչէ | ասորնեայք (և տողամիջում) |
| | | 93 5 | հուր ծախիչ է | ծախիչ (նախապէս ծագիցէ, յետոյ նոյն գրչից ուղղուած) |
| 85 11 | անօսրմարմինք | 96 5–6 | անօսրմարմինք | անաւսրամարմինք |

92, 6. — ՔԱՆԶԻ ՑՈՐԺԱՄ ՄՏՔ ՍՍԵՄՆ՝ ԹԷ ՍԻՔ ՇՆՉԷ ԱՍՈՐՆԵԱՅՔ ԱՍԵՆ՝ ԱՅՍ ՇՆՉԷ. — Աճառեան[1] կ'ըսէ ասորնեայք չէ այլ ասորնեայք պէտք է ըլլայ, և այդպէս ալ կը կարդայ իր նորագիւտ ձեռագրին մէջ. և թէ այդ սխալ ձևը (ասորնեայք) առաջ եկած է տառի և տառի չփոթութենէն։ Յայտնի է որ, ինչպէս կը տրամաբանէ Աճառեան, ասորնեայքը՝ ասորին ուղղական ձևէ մը պիտի առաջ գար. բայց այդ ձևը գոյութիւն չունի, ուրեմն և ոչ ասորնեայքը։ Ինչպէս նաև նոյն եզրակացութեան կը յանգինք գիտնալով որ այս ասորերէն սատանայ նշանակող բառ չկայ։ Որով կը մնայ ասորնեայք իբր ուղիղ ձև՝ հակադրուած վերինքի, որ կ'ենթադրէ Հայոց մէջ այդ դարուն իսկ վերին և ստորին բարբառ։

Ցեցած Աճ. ձեռագրի և իր տուած փաստերուն՝ վերջին տպագրութեան մէջ մենք ալ ասորնեայք փոխեցինք։

96, 4–6. — Ի ՄԱՐՄՆԱԻՈՐԱՑՆ ԵՆ ՈՐ ԹԱՆՁՐԱՄԱՐՄԻՆՔ ԵՆ ԵՒ ԵՆ ՈՐ ԱՆՕՍՐ ՄԱՐՄԻՆՔ. — Աճ.[2] լաւ կը գրէ որ անօսրամարմինք պէտք է ըլլայ՝ իբրև հակադրութիւն թանձրամարմինքին, ինչպէս ունի իր նորագիւտ ձեռագիրն ալ։ Զմ.ը ունի անօսրմարմինք. բգիտ. ալ միացած պէտք էր, հաւանօրէն տպ.ի սխալ։

Այս սրբագրութիւնն ալ անցուցած ենք Եզնիկի վերջին տպ.ին մէջ։

98, 24. — ՈՉ ԵԹԷ ԱՆՁԻՆՔ ԻՆՉ ԵՆ, ԱՅԼ ԱՆՈՒԱՆՔ ՁՐԱՆԳՏԱՆԱՑ. — Հ. Գ. Վ. Նահապետեան[3] կ'ուզէ ուղղել բանդագուշանաց, ըստ իմաստին. սակայն կը պակսի ձեռագրի հեղինակութիւնը։ Զմ. տպ. ունի՝ բանաստեղծիցն զանայք. այդ ալ, յայտնի է, քմահաճ փոփոխութիւն կամ մեկնութիւն մ'է։ Բագրատունեան սրբ.ը ունի՝ զբան զտանաց՝ իբրև երկու բառ և ոչ մէկ։

99, 4–8. — ՈՉ ԵՐԲԵՔ Ի ՄԱՐԴԿԱՆԷ ԵՂԵԱԼ ՊԱՅՆ՝ ԵԹԷ ԱՌ ԵՐԵՍ ԱՐԱՐԱԾ ԻՑԷ, ԵՒ ՈՉ Ի ԿՈՎՈՒՑ ԾՈՎԱՑՈՒԼՆ ԵՂԵԱԼ՝ ԵԹԷ Ի ԾՈՎԱԿՍ ԲՆԱԿԻՑԷ. — Յայտնի է որ իմաստը շատ յստակ չէ. Նորայր[4] կ'ուզէ ընթեռնուլ «Ոչ երբեք ի մարդկանէ եղեալ պայն՝ եթէ առ երես արածիցէ, և ոչ ի կովուց ծովացուլն եղեալ՝ ի ծովակս բնակիցէ։ Եզնիկ ըսել կ'ուզէ. Ոչ երբեք ծնած է ի մարդոյ պայ՝ որ երթայ անասնոց հետ արածի, և ոչ ի կովուց ծնած է ծովացուլ՝ որ ծովակներու մէջ բնակի»։

Յայտնի է որ սրամիտ, գիտաւոր սրբագրութիւն մ'է Նորայրի կատարածը, բայց թէ որքան իրականութեան կը մօտենայ՝ չենք կրնար վճռել։ Աճ-Գէորգեան սրբ. և Զմ. տպագիրը միասին

1. Քննութիւն են. էջ 74–75։
2. Անդ էջ 76–7։
3. Ուղղղր. են. էջ 285։
4. Քննասէր Ա. պրակ էջ 8–9։

digitised by A.R.A.R.@

| էջ. | տող. | | էջ. | տող. | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | ՃԱՌ ԻԴ. Ցաղագս թէ ոչ գոն յաւերժահարսունք | | | | |
| 86 | 5 | քան զծանուցս նրբագոյն | 97 | 2 | քան զծանուցեան նրբագոյն է | քան զկէսն նրբագոյն (չիք զծանուցեան) |
| | 13 | աւերժահարսից ծնունդք | | 7 | համբարուաց ծնունդք | |
| 87 | 7 | կերպարանս այլ և այլս | | 25 | կերպարանս կերպարանս | |
| | 11 | ըստ կարծեաց նոցա | 98 | 5 | ըստ կեղծեաց նոցա | |
| | 13 | զոմն համբարու և զոմն աւերժահարս | | 8 | չիք և զոմն համբարու | նոյնպէս չիք և զոմն համբարու |
| 88 | 4 | ի բանաստեղծիցն զրեալք | | 26 | զբանգաանաց | |
| | 16 | զոր արալէզն կոչեն | 99 | 16 | զոր արալէզն կոչեն | չիք զոր արալէզն կոչեն |
| | 20 | պնդին յիրացն վերայ | | 21 | պնդին ի բանիցն վերայ | |

համաձայն են նախնական ընթերցումին. որով Նորայրի կարծիքը առ այժմ ալ կամայական կը մնայ։

Մարիէս[1] այդ խօսքին երկրորդ մասին մէջ է որ սրբագրութիւն մ'ուզած է ներմուծել, այսինքն փոխանակ ըսելու «և ոչ ի կոխուց ծովացուցն ելեալ» կ'ուզէ ուղղել՝ ծովացուցս կով գործեաց։ Թէ ինչպէս կովացուցը՝ ծովացուց եղած է կ'ուզէ մեկնել չփոթ լսելութենէ մը, և իբրև թէ ԺԱ դարէն վերջ Աճ նի աոջև՝ որ ց կը հնչուէր՝ անցեր է ճ ի հնչման ուսկից ալ առաջ եկած է ծովացուլ։

Շատ քաշքշուկ և կամայական կը թուին Մարիէսի ըսածները և իմաստը աւելի կը մթնցնեն։ Ադոնց[2] ալ կը վկայէ թէ պէտք չկայ այդպիսի փոփոխութեան մը։

(Շարունակելի) Հ. ԵՂԻԱ ՓԵՉԻԿԵԱՆ

# ՆԻՒԹԵՐ ՊՈՒԼԿԱՐԱՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

## ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՇԻՆՈՒԹԵԱՆ

## ՖԻԼԻՊԷԻ ՀԱՅՈՑ Ս. ԳԷՈՐԳ ԵԿԵՂԵՑԻՈՅՆ

Օգտակար, շահեկան և կարեւոր վաւերաթուղթ մըն է հետեւեալը զոր արտագրած եմ Ֆիլիպէի Սուրբ Գէորգ եկեղեցւոյն գիրքերուն մէջ կատարած պըրպտումներուս ընթացքին։

Վաւերաթուղթս մաս կը կազմէ ձեռագիր հատորիկի մը[3], և կը խօսի Ֆիլիպէի Սուրբ Գէորգ եկեղեցւոյն վերաշինութեան վրայ։

ՍՏՈՐԱԳՐՈՒԹԻՒՆ
ՍՐԲՈՑ ԵԿԵՂԵՑԻՈՑ, ՈՐ Ի ՓԻԼԻՊՊՈՒՊՈԼԻՍ ՔԱՂԱՔ ՆՈՐՈԳ ԿԱՌՈՒՑԵԼՈՑ, ՅԱՆՈՒՆ ՍՐԲՈՅՆ ԳԷՈՐԳԱՅ ՔԱՋԱՄԱՐՏԻԿ ԶՕՐԱՎԱՐԻՆ ՔՐԻՍՏՈՍԻ

«Ի Պատրիարգութեան սրբոյն Սաղիմա Տեառն Տեառն

Գաբրիէլ Աստուածաբեալ և Սրբազան Արք Եպիսկոպոսին։

Եւ ի Պատրիարգութեան Կոստանդինուպօլսոյ Տեառն Տեառն Կարապետ Աստուածընտիր և Սրբազան Արք Եպիսկոպոսին

Եւ ի յառաջնորդութիւն քաղաքիս Տեառն Տեառն

Մեսրովբ Առաքելաշունչ Արք Եպիսկոպոսին։

Յամի Տեառն մերոյ 1828 և ի հայոց ՌՄՀԷ գրեալ ի Փիլիպպուպօլիս բարեձոխ քաղաքի, ի սեպտեմբերի ամսոյ 25։

Ամենայն տուրք բարիք և ամենայն պարգեւք կատարեալք ի վերուստ են իջեալք առ ի հօրէն լուսոյ։ Յակոբ «Առաք». գլ ա. համար ժե։

Վասն որոյ ամենայն ըստ կարի իւրում պարտի ըստանալ հոգեւոր բարիս, զի որպիսի է պատճառն, այնպիսի է գործն. հո-

1. Revue ան էջ 97 (179)։
2. Բազմ. 1926, էջ 110։
3. Այս Հատորիս Ա. մասը հրատարակեցի Բազմավէպի մէջ. տես տարի 1925, էջ 258. 1926, էջ 37։